ոչ գոլով տեարք գոյից իւրեանց չունին իրաւունս բաժանելոյ զայնս ըստ հաճոյից բարեկամաց իւրեանց և ազգականաց. և նոքին իսկ ազգականք ոչ ունին իրաւունս իբրև ժառանգ ներկայանալ և պահանջել զգոյս հանգուցելոյն, այլ յետ մահուան կուսակրօնից գոյք իւրեանց արժան է մնալ 'ի սեպհականութիւն Էջմիածնի գանձարանին, և այլոց վանօրէից միաբանիցն՝ վանուցն իւրեանց. իսկ վանահայրք որք ըստ անօրէնութեան Հոգևոր ծայրագոյն իշխանութեանն կարգին 'ի պաշտօնն նոյնպէս գոյք նոցա պատկանին Սրբոյ Էջմիածնի. և ոչ որք յազգականաց հեռաւորաց կամ մերձաւորաց նոցա ունին իրաւունս յարուցանելոյ առ այն զվէճ. իսկ եթէ իցեն Աստուածահաճոյ կտակ հանգուցելոյն յօգուտ սրբոյ Աթոռոյն, վանօրէից կամ վանական դպրոցաց՝ մնասցեն նոքա անփոփոխ նոյնութեամբ. քաջ գիտելով զայս մեր ի ներքոյ սորագրելոցս, ըստ ամենայնի համաձայն գտանիմք և ոչ երբէք տամք 'ի մերս կողմանէ իրաւունս ազգականաց մերոց մերձաւորաց և հեռաւորաց յետ վախճանի մերոյ իբրև ժառանգորդ մեր հանդիսանալ և պահանջել զմնացեալ գոյս մեր կամ մասն ինչ ի գոյից մերոց. մեք ի սուրբ խղճէ շարժեալ խոստովանիմք զի յետ վախճանի մերոյ ուր երբ և յոր պաշտօնի գտանիցիմք ժառանգ և ժառանգորդ մեր է գանձարանն սրբոյ Էջմիածնի. և ոչ այլ ոք ի մերձաւորաց մերոց և յազգականաց և եթէ նոքա կամիցին իբրև ժառանգ ներկայանալ ընդդէմ մերոց կամաց և խղճի, չունիցին բնաւ իրաւունս ոչ 'ի հոգևորական և 'ի քաղաքական դատարանս և ոչ յայլուր դանգատիլ և բողոքել. և եթէ յանդգնեսցին մի լուիցեն նոցա ամենեքին, զի մեք ըստ մեր խղճի մտաց յօժարակամ սորագրեմք աստանօր։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿ

Դաստուրն Իսաւարար
Ի մանն մասնեաց զգողն արդար
զոր զաղայալ զգողոնն եաւ
փրկանն անձին իւրոյ արար.

Էր յարեւելք աղուոր ճաղաճ մի
Է բարեսու ու մրզայի.
Բուրաստան մեծ աղուոր այգի
գերիս յիւր մէջն պիտէի .1.

Ներքոյս շնորհալի մեր սուրբ Հայրապետի անուանով այսպիսի հանելուկներ ձեռագրաց մէջ շատ տեղ կգտնուին որոշ հարիւրէն աւելի. ցանկալով մեր ազգայնոց ծանօթութիւն տալ կիլիկիոյ կողմանց հայոց այն ժամանակն եղած աշխարհաբառ լեզուի վրայ, որով գրուած են այս հանելուկները, Ամսաթերթիս մէջ կտպենք հետ զհետէ, ի զլուծանս բաժանորդաց, որոնք սուրբ գրոց իմաստից վրայ շինուած են։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Արարատայ յայտարարութեան մէջ [illegible] Սրբոյ Աթոռոյս [illegible] Արարատայ [illegible]

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ